ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 163

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Ոստան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Արտաշատ համայնքի (Ոստան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Ոստան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
03-077-1098-0001 կադաստրային ծածկագրով 0.012714 հա մակերեսով և 03-077-0040-0062 կադաստրային ծածկագրով 0.002782 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքեր	03-077-1098-0001 կադաստրային ծածկագրով 0.012714 հա մակերեսով և 03-077-0040-0062 կադաստրային ծածկագրով 0.002782 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ ներկայացված պահանջը (կցվում է):

4. Արտաշատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Ոստան բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Ոստան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «10» «հունիսի» 2025 թ.